

<<Հրդեհների վիճակագրություն>>

2014թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ՊՀ և ՏԱ տեսչության կողմից հաշվառվել է 740 հրդեհ՝ շուրջ 369.4 միլիոն դրամի նյութական վնասով: Հրդեհներից զոհվել է 22, վնասվածքներ ստացել՝ 29 մարդ: 2013թ.-ի նույն ժամանակահատվածում հաշվառվել էր 515 հրդեհ՝ շուրջ 188.7 միլիոն դրամի նյութական վնասով, հրդեհներից զոհվել էր 6 և վնասվածքներ ստացել՝ 20 մարդ: Այսպիսով, հրդեհների քանակն աճել է 225 դեպքով (43.69%), զոհերի թիվը՝ 16-ով (3.6 անգամ), վնասվածք ստացածներինը՝ 9-ով (45%), իսկ նյութական վնասի գումարը՝ շուրջ 180.7 միլիոն դրամով (95.79%): Ոչնչացել է 12 շինություն (2013թ.-ին՝ 13), 11 միավոր ավտոտրանսպորտ (2013թ.-ին՝ 18), շուրջ 316 տոննա անասնակեր (2013թ.-ին՝ 234):

Հրդեհների քանակը նվազել է Երևան քաղաքում և Տավուշի մարզում, իսկ աճել՝ մնացած բոլոր մարզերում: Հրդեհների քանակի աճը հիմնականում պայմանավորված է չոր խոտածածկով բաց տարածքներում առաջացած հրդեհներով, ինչն իր հերթին հետևանք է մեր քաղաքացիների որոշ մասի հանցավոր անփութության, երբ մոռանում են հանգցնել վառած խարույկը, կամ էլ չմարված ծխախոտն ու լուցկին նետում են չոր խոտածածկին: Նախորդ տարվա համեմատ վերը նշված տարածքներում առաջացած հրդեհների քանակն աճել է 108-ով կամ 87.8%-ով:

Հրդեհների 52.97%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 47.03%-ը՝ գյուղական բնակավայրերում: Դրանց 42.97%-ը տեղի է ունեցել բնակելի հատվածում, 31.21%-ը՝ բաց և խոտածածկ տարածքներում, 7.83%-ը՝ ավտոմեքենաներում, 3.1%-ը՝ գյուղատնտեսական նշանակության օբյեկտներում, 2.43%-ը՝ առևտրի, հանրային սննդի ու սպասարկման օբյեկտներում, 1.35 %-ը՝ արտադրական շենքերում, 1.08%-ը՝ ավտոտնակներում, իսկ 10.03%-ը՝ այլ նշանակության օբյեկտներում:

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 51.35%, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 20.94%, երեխաների խաղալը կրակի հետ՝ 11.08%, վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 4.46%, հրկիզումները՝ 1.48%:

Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 20-ը խոշոր և առավել խոշոր են (նախորդ տարի՝ նույնպես 20), որոնցից պատճառված նյութական վնասի գումարը կազմել է շուրջ 303 միլիոն դրամ, որն ընդհանուր նյութական վնասի 82%-ն է: Առավել խոշոր հրդեհներից են՝

- 1) 02.02.14թ.՝ Արարատի մարզ, գ. Արմաշ, <<Մանանա գրեյն>> ՍՊԸ այրաղացի պահեստ՝ 76 081 755 դրամ:
- 2) 09.06.14թ.՝ Սյունիքի մարզ, ք.Գորիս, Անկախության 30 բնակելի տուն՝ 44 649 039 դրամ:
- 3) 22.05.14թ.՝ Արարատի մարզ, գ. Հայանիստ, „Սաթենիկ,, մարկետ՝ 32 000 000 դրամ:
- 4) 01.01.14թ.՝ ք.Երևան, Հրազդանի կիրճ, „Գեղամա,, ռեստորան՝ 30 483 103 դրամ:
- 5) 22.02.14թ.՝ Արարատի մարզ, գ. Ավշար, շինանյութի պահեստ՝ 30 000 000 դրամ:
- 6) 05.01.14թ.՝ Սյունիքի մարզ, գ. Աջաբաջ, գոմի տանիք՝ 21 030 000 դրամ:
- 7) 23.03.14թ.՝ ք.Երևան, Նորագավիթ 10, <<Նիսան Մուռանո>> մակնիշի ավտոմեքենա՝ 11 594 000 դրամ:
- 8) 15.01.14թ.՝ Արարատի մարզ, գ. Արմաշ, առևտրի սրահ՝ 9 000 000 դրամ:

2014թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում թվով 22 հրդեհներում զոհվել է 22 քաղաքացի, իսկ 2013թ.-ին՝ թվով 6 հրդեհներում զոհվել էր 6 քաղաքացի: Զոհերով հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, անզգուշությունը ծխելուց, էլեկտրական սարքավորումների և վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը, ինչպես նաև հրկիզումն ու ինքնահրկիզումը: Զոհերն արձանագրվել են հետևյալ

տարածաշրջաններում. ք.Երևան՝ 6, Արմավիր՝ 4, Արագածոտն՝ 3, Շիրակ, Կոտայք և Արարատ՝ 2-ական, Տավուշ, Սյունիք և Լոռի՝ մեկական: Դրանց գերակշիռ մասը՝ 19-ը, գրանցվել է բնակելի հատվածում, որոնցից 8-ը տարեց մարդիկ են:

2014թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում վնասվածքներ են ստացել 29 քաղաքացիներ՝ 9-ով (կամ 45%) պակաս, քան նախորդ տարի: Թվով 16 մարդիկ վնասվածքներ են ստացել բնակելի հատվածում, ևս 11-ը՝ ավտոմեքենաներում, մեկական՝ ԱԳԼՃԿ-ում և բաց տարածքում: Վնասվածքները գրանցվել են՝ ք.Երևանում և Լոռիում՝ 6-ական, Արագածոտնում՝ 5, Գեղարքունիքում՝ 4, Արմավիրում՝ 3, Վայոց ձորում՝ 2, Կոտայքում, Շիրակում և Սյունիքում՝ մեկական: Դրանց առաջացման պատճառներն են երեխաների խաղալը կրակի հետ, էլեկտրական ու գազով գործող սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը, անզգուշությունը ծխելուց, վառելանյութի արտահոսքը, պայթյունը, ինչպես նաև հրկիզումն ու ինքնահրկիզումը: Վնասվածքներ ստացածներից մեկը երեխա է, իսկ 3-ը՝ տարեցներ:

Տեսչության տարածքային մարմինների կողմից կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 262 որոշում, որոնց օրինականությունը ստուգվել է համապատասխան տարածաշրջանների դատախազությունների կողմից: Դատաքննչական մարմիններ են ուղարկվել 95 հրդեհի նյութեր, որոնցից 24-ով քրեական գործի հարուցումը մերժվել է: Հարուցվել է 12 քրեական գործ, որոնցից 2-ը կասեցվել է, 2-ը՝ կարճվել, իսկ 59 նյութեր գտնվում են վարույթում:

ՀՀ ԱԻՆ ՊԿ և ՏՍՏ ՀՀՎՀՔ բաժնի պետ
Ս. Հայրապետյան